ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2025 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N ՀՌՀ-ՄԱԾՁԲ-25/29-9 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «21» հոկտեմբերի 2025 թ.

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Սմբատ Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԼ ՊԱՌԿՈ Հյուրանոց» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գայանե Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2025 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված N «ՀՌՀ-ՄԱԾՁԲ-25/29-9» գնման պայմանագրի՝ այսուհետ «Պայմանագիր» 4.1, 4.2, 7.5 և 7.16 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման վճարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելված 1-ի (կցվում է):

1.2 Կատարել փոփոխություն Պատվիրատուի բանկային հաշվեհամարում՝ 900011057016 հաշվեհամարը փոխարինել 900011054310 հաշվեհամարով:

1.3 Սահմանել, որ Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է **2 (երկու)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողով
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառական վարչություն
Հ/Հ 900011054310
ՀՎՀՀ 02556422

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱԼ ՊԱՌԿՈ Հյուրանոց» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Իտալիայի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930052609410100
ՀՎՀՀ 02633149

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
«16» հոկտեմբերի 2025 թ. կնքված ՀՌՀ-ՄԱԾՁԲ-25/29-9 ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«21» հոկտեմբեր 2025 թ.կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98391160/2	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	5000000	5000000	5000000	**5000000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողով
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011054310
ՀՎՀՀ 02556422

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱԼ ՊԱՌԿՈ Հյուրանոց» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Իտալիայի 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300526094101 00
ՀՎՀՀ 02633149

(ստորագրություն)

Կ.Տ